

II

(Ոչ օրենսդրական ակտեր)

ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ

«Օդորակիչների էներգապիտակավորման մասին»

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 թվականի մայիսի 4-ի

թիվ 626/2011 ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Էներգիա սպառող արտադրանքի կողմից էներգիայի և այլ ռեսուրսների սպառման վերաբերյալ՝ պիտակավորման և արտադրանքի ստանդարտ տեխնիկական բնութագրի միջոցով նշում կատարելու մասին»

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2010 թվականի մայիսի 19-ի 2010/30/ԵՄ հրահանգը¹ և մասնավորապես՝ դրա 10-րդ հոդվածը,

քանի որ՝

- 1) 2010/30/ԵՄ հրահանգով պահանջվում է, որ Հանձնաժողովն ընդունի պատվիրակված ակտեր՝ կապված էներգիա սպառող այնպիսի արտադրանքի պիտակավորման հետ, որն ունի էներգախնայողության զգալի ներուժ և համարժեք ֆունկցիոնալ հնարավորությամբ արդյունավետության մակարդակներում էական տարբերություններ.

¹ ՊՏ L 153, 18.6.2010 թ., էջ 1:

- 2) օդորակիչների էներգապիտակավորման վերաբերյալ դրույթները սահմանվել են Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող՝ «Կենցաղային օդորակիչների էներգապիտակավորման մասին» Հանձնաժողովի 2002 թվականի մարտի 22-ի 2002/31/ԵՀ հրահանգով¹: Կիրարկող հրահանգով պիտակավորման տարբեր սանդղակներ են սահմանվում տարբեր տեխնոլոգիաներ օգտագործող օդորակիչների համար, եւ էներգաարդյունավետության որոշումը հիմնվում է միայն լրիվ բեռնվածքով շահագործման վրա.
- 3) օդորակիչների կողմից օգտագործվող էներգիան կազմում է Միությունում կենցաղային եւ առետրային նպատակներով օգտագործման ընդհանուր էներգիայի պահանջարկի զգալի մասը: Բացի արդեն ձեռք բերված էներգաարդյունավետության բարելավումներից՝ գոյություն ունի օդորակիչների կողմից էներգասպառումը հետագայում նվազեցնելու զգալի մեծ հնարավորություն.
- 4) 2002/31/ԵՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչվի, եւ սույն կանոնակարգով պետք է նոր դրույթներ սահմանվեն էներգապիտակավորման միջոցով արտադրողների համար դինամիկ խրախուսական միջոցների ստեղծումն ապահովելու համար՝ օդորակիչների էներգաարդյունավետությունն էլ ավելի բարելավելու եւ դեպի էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ շուկայի վերափոխումն արագացնելու համար.
- 5) սույն կանոնակարգի դրույթները պետք է կիրառվեն մինչեւ 12 կՎտ հովացման ելքային հզորությամբ (կամ ջեռուցման ելքային հզորությամբ միայն այն դեպքում, երբ առկա է ջեռուցման ֆունկցիա)՝ «օդ-օդ» տիպի օդորակիչների նկատմամբ.

¹ ՊՏ L 86, 3.4.2002 թ., էջ 26:

- 6) վերջին տարիներին օդորակիչների էներգաարդյունավետության բարելավման ոլորտում տեխնոլոգիական բարելավումները շատ արագ են տեղի ունենում: Սա թույլ է տվել մի քանի երրորդ երկրների ներկայացնել էներգաարդյունավետության նվազագույն խիստ պահանջներ եւ հանգեցրել է սեզոնային արդյունավետության ցուցանիշների հիման վրա էներգապիտակավորման նոր սխեմաներ ներդնելու գործընթացի: Ժամանակակից սարքավորումները, բացառությամբ արդյունավետության ամենաբարձր մակարդակներն ապահովող միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների, վերջերս գերազանցել են 2002/31/ԵՀ հրահանգով սահմանված՝ արդյունավետության «A» մակարդակները:
- (7) սույն կանոնակարգով ներկայացվում է էներգաարդյունավետության երկու սանդղակ՝ ելնելով հիմնական ֆունկցիայի եւ սպառողի համար կարելու որոշակի հայեցակետերից: Հաշվի առնելով, որ օդորակիչները հիմնականում օգտագործվում են մասնակի բեռնվածքի պայմաններում՝ էներգաարդյունավետության փորձարկումը պետք է փոփոխվի սեզոնային արդյունավետության չափման մեթոդի՝ բացառությամբ միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների: Սեզոնային չափման մեթոդի միջոցով առավել հաշվի են առնվում ինվերտորային տեխնոլոգիայի առավելությունները եւ այն պայմանները, որոնցում օգտագործվում են այդ սարքավորումները: Արդյունավետության հաշվարկի նոր մեթոդը ներկա «A» մակարդակը գերազանցող՝ էներգաարդյունավետության նվազագույն պահանջներ սահմանող՝ Էկոնախագծման վերաբերյալ կիրարկող միջոցի հետ միասին կհանգեցնի այդ սարքերի վերադասակարգմանը: Արդյունքում «սպլիտ» տիպի, պատուհանի եւ պատի վրա տեղադրվող օդորակիչները պետք է ունենան էներգաարդյունավետության դասերի նոր՝ «A-G» սանդղակ՝ երկու տարին մեկ սանդղակի վերելում «+»-ի ավելացմամբ մինչեւ «A+++» դասին հասնելը:
- 8) երկխողովակ եւ միախողովակ օդորակիչների դեպքում պետք է շարունակվի կայուն ռեժիմում էներգաարդյունավետության ցուցանիշների կիրառումը,

քանի որ ներկայումս շուկայում առկա չեն ինվերտորային տիպի սարքեր: Քանի որ այս սարքավորումների վերադասակարգումը նպատակահարմար չէ, միախողովակ եւ երկխողովակ օդորակիչները պետք է ունենան «A+++D» սանդղակ: Այն դեպքում, երբ այս սարքերը, որոնք, ըստ էության, «սպիտ» տիպի սարքերից պակաս արդյունավետ են, կարող են հասնել միայն «A+» էներգաարդյունավետության դասի՝ «A+++D» սանդղակում, իսկ ավելի արդյունավետ սարքերը կարող են հասնել մինչեւ «A+++» էներգաարդյունավետության դասը.

- 9) սույն կանոնակարգով պետք է ապահովվի սպառողների կողմից օդորակիչների արդյունավետության ցուցանիշների վերաբերյալ ավելի ճշգրիտ համեմատական տեղեկությունների ստացումը.
- 10) ակնկալվում է, որ սույն կանոնակարգով եւ օդորակիչների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասով Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող կանոնակարգով՝ սահմանվող էներգապիտակավորման համակցված ազդեցությունը մինչեւ 2020 թվականը կհանգեցնի տարեկան 11 տվտ էլեկտրախնայողության՝ ի համեմատություն միջոցների չկիրառման դեպքում եղած իրավիճակի.
- 11) օդորակիչների աղմուկի մակարդակը կարող է կարելու հայեցակետ լինել վերջնական սպառողների համար: Վերջիններիս տեղեկացված որոշում կայացնելու հնարավորություն ընձեռելու համար աղմուկի առաջացման վերաբերյալ տեղեկությունները պետք է ներառվեն օդորակիչների պիտակներում.
- 12) պիտակի վրա տրամադրվող տեղեկությունները պետք է ձեռք բերվեն հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման ընթացակարգերի միջոցով, որոնք հիմնվում են չափման՝ համընդհանուր ճանաչում ունեցող արդիական մեթոդների, այդ թվում՝ առկայության դեպքում՝ ստանդարտացման

¹ Դեռեւս ընդունված չէ:

Եվրոպական մարմինների կողմից ընդունված ներդաշնակեցված ստանդարտների վրա, որոնք թվարկված են Եվրոպական պառլամենտի և Խորհրդի՝ տեխնիկական ստանդարտների և կանոնակարգերի ոլորտում տեղեկությունների տրամադրման ընթացակարգը սահմանող՝ 1998 թվականի հունիսի 22-ի 98/34/ԵՀ կանոնակարգի 1-ին հավելվածում¹.

- 13) սույն կանոնակարգով պետք է սահմանվի օդորակիչների պիտակների միասնական ձեւը և դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները.
- 14) բացի այդ, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն օդորակիչների վերաբերյալ տեխնիկական փաստաթղթերին և տեղեկաթերթիկներին ներկայացվող պահանջները.
- 15) ավելին, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն օդորակիչների հեռակա վաճառքի ցանկացած ձեւի, գովազդի և տեխնիկական գովազդային նյութերի համար տրամադրվելիք տեղեկություններին ներկայացվող պահանջները.
- 16) անհրաժեշտ է նախատեսել սույն կանոնակարգի դրույթների վերանայումը՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը.
- 17) 2002/31/ԵՀ հրահանգից դեպի սույն կանոնակարգ անցումը դյուրացնելու նպատակով սույն կանոնակարգին համապատասխան պիտակավորված օդորակիչները պետք է համարվեն 2002/31/ԵՀ կանոնակարգին համապատասխանող.
- 18) այն մատակարարներին, որոնք ցանկանում են այնպիսի օդորակիչներ շուկայահանել, որոնք կարող են կատարել բարձր էներգաարդյունավետության դասերին ներկայացվող պահանջները, պետք է թույլատրել այդպիսի դասերի նշմամբ պիտակներ տրամադրել նախքան նման դասերի պարտադիր նշման ամսաթիվը.

¹ ՊՏ L 204, 21.7.1998 թ., էջ 37:

19) հետեւաբար, 2002/31/ԵՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչվի,
ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն կանոնակարգով սահմանվում են էլեկտրական ցանցից սնվող, ≤ 12 կՎտ հովացման կամ ջեռուցման (եթե արտադրատեսակը չունի հովացման ֆունկցիա) անվանական հզորությամբ օդորակիչների պիտակավորմանը եւ արտադրատեսակի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների տրամադրմանը ներկայացվող պահանջները:
2. Սույն կանոնակարգը չի կիրառվում հետեւյալի նկատմամբ՝
 - ա) ոչ էլեկտրական էներգիայի աղբյուրներ օգտագործող սարքեր.
 - բ) օդորակիչներ, որոնց կոնդենսատորի հատվածը կամ գոլորշի հատվածը կամ երկուսն էլ չեն օգտագործում օդը որպես ջերմության փոխանցման միջավայր:

Հոդված 2

Սահմանումները

Ի լրումն Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգի¹ 2-րդ հոդվածով նախատեսված սահմանումների՝ կիրառվում են հետեւյալ սահմանումները՝

- 1) «օդորակիչ» նշանակում է սարք, որն ունակ է ներսի օդը հովացնել կամ տաքացնել կամ երկուսն էլ՝ էլեկտրական կոմպրեսորի միջոցով աշխատող՝

¹ ՊՏ L 153, 18.06.2010թ., էջ 1:

գոլորշու խտացման ցիկլի կիրառմամբ, այդ թվում՝ այն օդորակիչները, որոնք ունեն այնպիսի լրացուցիչ ֆունկցիոնալ հնարավորություններ, ինչպիսիք են խոնավագերծումը, օդի մաքրումը, օդափոխությունը եւ օդի լրացուցիչ տաքացումը՝ էլեկտրական դիմադրության հաշվին ջեռուցման, ինչպես նաեւ այնպիսի սարքվածքների միջոցով (կոնդենսացիոն ջուր, որն առաջանում է գոլորշի հատվածի վրա, կամ դրսից ավելացված ջուր), որոնք կարող են օգտագործել ջուր՝ կոնդենսատորի վրա գոլորշիացման նպատակով՝ պայմանով, որ սարքը նաեւ կարող է աշխատել առանց լրացուցիչ ջրի օգտագործման՝ միայն օդի կիրառմամբ.

- 2) «*երկխողովակ օդորակիչ*» նշանակում է օդորակիչ, որում հովացման կամ ջեռուցման ժամանակ կոնդենսատորի կամ գոլորշի ներիս օդը սարք է ներմուծվում արտաքին միջավայրից խողովակի միջոցով եւ արտաքին միջավայր է արտանետվում երկրորդ խողովակի միջոցով, եւ որն ամբողջությամբ տեղադրվում է օդորակվող սենքի ներսում՝ պատի կողքին.
- 3) «*միախողովակ օդորակիչ*» նշանակում է օդորակիչ, որում հովացման կամ ջեռուցման ժամանակ կոնդենսատորի կամ գոլորշի ներիս օդը ներմուծվում է այն սենքից, որտեղ գտնվում է սարքը, եւ արտանետվում է այդ սենքից դուրս.
- 4) «*անվանական հզորություն*» (*P_{անվանական}*) նշանակում է սարքի՝ գոլորշու խտացման ցիկլի հովացման կամ ջեռուցման հզորությունը ստանդարտ անվանական պայմաններում.
- 5) «*վերջնական սպառող*» նշանակում է սպառող, որը գնում է կամ ակնկալվում է, որ կգնի օդորակիչը.
- 6) «*վաճառքի կետ*» նշանակում է վայր, որտեղ օդորակիչները ցուցադրված են կամ առաջարկվում են վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար:

II-VIII հավելվածների նպատակներով լրացուցիչ սահմանումները ներկայացված են I հավելվածում:

Հոդված 3

Մատակարարների պարտականությունները

1. Մատակարարները ձեռնարկում են «ա»-ից «է» կետերում նկարագրված միջոցները.
 - ա) II հավելվածով սահմանված՝ էներգաարդյունավետության դասերին համապատասխանող յուրաքանչյուր օդորակչի համար տրամադրվում է տպված պիտակ: Պիտակի ձեւը եւ տեղեկությունների բովանդակությունը պետք է համապատասխանեն III հավելվածով սահմանված ձեւին եւ տեղեկությունների բովանդակությանը: Օդորակիչների համար, բացառությամբ միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների, պետք է տրամադրվի տպված պիտակ՝ առնվազն դրսում տեղադրվող սարքի փաթեթվածքի մեջ, ներսում տեղադրվող եւ դրսում տեղադրվող սարքերի առնվազն մեկ համակցման համար՝ հզորության օգտագործման «1» գործակցի դեպքում: Այլ համակցությունների դեպքում տեղեկությունները, որպես այլընտրանք, կարող են տրամադրվել ազատ հասանելիությամբ կայքէջում.
 - բ) տրամադրվում են արտադրանքի տեղեկաթերթիկներ, ինչպես սահմանված է IV հավելվածով: Օդորակիչների համար, բացառությամբ միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների, պետք է տրամադրվեն արտադրանքի տեղեկաթերթիկներ՝ առնվազն դրսում տեղադրվող սարքի փաթեթվածքի մեջ, ներսում տեղադրվող եւ դրսում տեղադրվող սարքերի առնվազն մեկ համակցության համար՝ հզորության օգտագործման 1 գործակցի դեպքում: Այլ համակցումների դեպքում տեղեկությունները, որպես այլընտրանք, կարող են տրամադրվել ազատ հասանելիությամբ կայքէջում.

- գ) հարցման հիման վրա անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին էլեկտրոնային տարբերակով տրամադրվում են V հավելվածով սահմանված տեխնիկական փաստաթղթերը.
- դ) օդորակչի որոշակի մոդելի ցանկացած գովազդում նշվում է էներգաարդյունավետության դասը, եթե գովազդը ներառում է էներգիայի սպառման եւ խնայողության կամ գնի վերաբերյալ տեղեկություններ: Եթե հնարավոր է կիրառել մեկից ավելի էներգաարդյունավետության դաս, ապա մատակարարը կամ արտադրողը համապատասխան դեպքում հայտարարում է ջեռուցման համար էներգաարդյունավետության դասը առնվազն «Միջին» ջեռուցման սեգրնի համար: Այն դեպքերում, երբ չի ակնկալվում, որ վերջնական սպառողները կտեսնեն արտադրատեսակը ցուցադրված վիճակում, տեղեկությունները տրամադրվում են VI հավելվածով սահմանված եղանակով.
- ե) օդորակչի որոշակի մոդելի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային նյութ, որը նկարագրում է տվյալ մոդելի որոշակի տեխնիկական պարամետրերը, ներառում է այդ մոդելի էներգաարդյունավետության դասը, ինչպես ներկայացված է II հավելվածում.
- զ) տրամադրվում են օգտագործման վերաբերյալ ցուցումներ.
- է) միախողովակ օդորակիչները պետք է անվանվեն «*տեղային օդորակիչներ*» փաթեթվածքում, արտադրատեսակի փաստաթղթերում եւ ցանկացած էլեկտրոնային կամ տպագիր գովազդային նյութում:
2. Էներգաարդյունավետության դասը որոշվում է այնպես, ինչպես սահմանված է VII հավելվածով:
3. Օդորակիչների (բացառությամբ միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների) պիտակի ձեւաչափը պետք է համապատասխանի III հավելվածով սահմանված ձեւաչափին:

4. Օդորակիչների (բացառությամբ միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների) պիտակների ձեւաչափը, որը սահմանված է III հավելվածում, կիրառվում է հետեւյալ ժամանակացույցին համապատասխան՝
- ա) ինչ վերաբերում է օդորակիչներին, բացառությամբ միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների, որոնք շուկայահանվում են 2013 թվականի հունվարի 1-ից սկսած, A, B, C, D, E, F, G էներգաարդյունավետության դասերով պիտակները պետք է համապատասխանեն III հավելվածի 1.1 կետին՝ դարձափոխային (ռեվերս) օդորակիչների համար, III հավելվածի 2.1 կետին՝ միայն հովացման ֆունկցիա ունեցող օդորակիչների համար, եւ III հավելվածի 3.1 կետին՝ միայն ջեռուցման ֆունկցիա ունեցող օդորակիչների համար.
- բ) ինչ վերաբերում է օդորակիչներին, բացառությամբ միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների, որոնք շուկայահանվում են 2015 թվականի հունվարի 1-ից սկսած, A+, A, B, C, D, E, F էներգաարդյունավետության դասերով պիտակները պետք է համապատասխանեն III հավելվածի 1.2 կետին՝ դարձափոխային (ռեվերս) օդորակիչների համար, III հավելվածի 2.2 կետին՝ միայն հովացման ֆունկցիա ունեցող օդորակիչների համար, եւ III հավելվածի 3.2 կետին՝ միայն ջեռուցման ֆունկցիա ունեցող օդորակիչների համար.
- գ) ինչ վերաբերում է օդորակիչներին, բացառությամբ միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների, որոնք շուկայահանվում են 2017 թվականի հունվարի 1-ից սկսած, A++, A+, A, B, C, D, E էներգաարդյունավետության դասերով պիտակները պետք է համապատասխանեն III հավելվածի 1.3 կետին՝ դարձափոխային (ռեվերս) օդորակիչների համար, III հավելվածի 2.3 կետին՝ միայն հովացման ֆունկցիա ունեցող օդորակիչների համար, եւ III հավելվածի 3.3 կետին՝ միայն ջեռուցման ֆունկցիա ունեցող օդորակիչների համար.

- դ) ինչ վերաբերում է օդորակիչներին, բացառությամբ միախողովակ եւ երկխողովակ օդորակիչների, որոնք շուկայահանվում են 2019 թվականի հունվարի 1-ից սկսած, A+++, A++, A+, A, B, C, D էներգաարդյունավետության դասերով պիտակները պետք է համապատասխանեն III հավելվածի 1.4 կետին՝ դարձափոխային (ռեվերս) օդորակիչների համար, III հավելվածի 2.4 կետին՝ միայն հովացման ֆունկցիա ունեցող օդորակիչների համար, եւ III հավելվածի 3.4 կետին՝ միայն ջեռուցման ֆունկցիա ունեցող օդորակիչների համար:
5. 2013 թվականի հունվարի 1-ից սկսած շուկայահանվող երկխողովակ օդորակիչների A+++, A++, A+, A, B, C, D էներգաարդյունավետության դասերով պիտակները պետք է համապատասխանեն III հավելվածի 4.1 կետին՝ դարձափոխային (ռեվերս) երկխողովակ օդորակիչների համար, III հավելվածի 4.3 կետին՝ միայն հովացման ֆունկցիա ունեցող երկխողովակ օդորակիչների համար, եւ III հավելվածի 4.5 կետին՝ միայն ջեռուցման ֆունկցիա ունեցող երկխողովակ օդորակիչների համար:
6. 2013 թվականի հունվարի 1-ից սկսած շուկայահանվող միախողովակ օդորակիչների A+++, A++, A+, A, B, C, D էներգաարդյունավետության դասերով պիտակները պետք է համապատասխանեն III հավելվածի 5.1 կետին՝ դարձափոխային (ռեվերս) միախողովակ օդորակիչների համար, III հավելվածի 5.3 կետին՝ միայն հովացման ֆունկցիա ունեցող միախողովակ օդորակիչների համար, եւ III հավելվածի 5.5 կետին՝ միայն ջեռուցման ֆունկցիա ունեցող միախողովակ օդորակիչների համար:

Հոդված 4

Վաճառողների պարտականությունները

Վաճառողներն ապահովում են հետևյալը՝

- ա) օդորակիչները վաճառքի կետում կրում են մատակարարների կողմից տրամադրված պիտակը՝ 3(1) հոդվածին համապատասխան՝ սարքի արտաքին առջևի հատվածին կամ սարքի վերին հատվածին այնպես, որ այն հստակորեն տեսանելի լինի.
- բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվող օդորակիչներն այն դեպքում, երբ չի կարող ակնկալվել, որ վերջնական սպառողը կտեսնի ցուցադրված արտադրանքը, շուկայահանվում են V եւ VI հավելվածներին համապատասխան մատակարարների կողմից տրամադրված տեղեկություններով.
- գ) օդորակչի որոշակի մոդելի ցանկացած գովազդում նշվում է էներգաարդյունավետության դասը, եթե գովազդը ներկայացնում է էներգիայի սպառման եւ խնայողության կամ գնի վերաբերյալ տեղեկություններ: Եթե հնարավոր է կիրառել մեկից ավելի էներգաարդյունավետության դաս, ապա մատակարարը (արտադրողը) հայտարարում է էներգաարդյունավետության դասն առնվազն «Միջին» ջեռուցման սեզոնի համար.
- դ) որոշակի մոդելին վերաբերող ցանկացած տեխնիկական գովազդային նյութ, որում նկարագրվում են օդորակչի տեխնիկական պարամետրերը, ներառում է մոդելի էներգաարդյունավետության դասին (դասերին) կատարվող հղումը եւ մատակարարի կողմից տրամադրված՝ օգտագործման համար ցուցումները: Եթե հնարավոր է կիրառել մեկից ավելի էներգաարդյունավետության դաս, ապա մատակարարը (արտադրողը) հայտարարում է էներգաարդյունավետության դասն առնվազն «Միջին» ջեռուցման սեզոնի համար.

է) միախողովակ օդորակիչները պետք է անվանվեն «*տեղային օդորակիչներ*» փաթեթվածքում, արտադրատեսակի փաստաթղթերում եւ ցանկացած էլեկտրոնային կամ տպագիր գովազդային նյութում:

Հոդված 5

Չափման մեթոդները

Յ-րդ հոդվածի համաձայն տրամադրվելիք տեղեկությունները ստացվում են հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման ընթացակարգերով, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող հաշվարկման եւ չափման արդիական մեթոդների վրա, ինչպես սահմանված է VII հավելվածով:

Հոդված 6

Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը

Երբ անդամ պետությունները գնահատում են սահմանված էներգաարդյունավետության դասի համապատասխանությունը, տարեկան կամ ժամում էներգասպառումը՝ համապատասխան դեպքում, ինչպես նաեւ աղմուկի առաջացումը, նրանք կիրառում են VIII հավելվածով սահմանված ընթացակարգը:

Հոդված 7

Վերանայումը

Հանձնաժողովը սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց ամենաուշը հինգ տարի անց վերանայում է այն՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը: Մասնավորապես պետք է ուշադրություն դարձնել տարբեր տեսակի սարքավորումների՝ շուկայի չափաբաժինների նշանակալի փոփոխություններին:

*Հոդված 8***Ուժը կորցրած ճանաչելը**

2002/31/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 2013 թվականի հունվարի 1-ից:

*Հոդված 9***Անցումային դրույթը**

1. Նախքան 2013 թվականի հունվարի 1-ը շուկայահանված օդորակիչները պետք է համապատասխանեն 2002/31/ԵՀ հրահանգով սահմանված դրույթներին:

*Հոդված 10***Ուժի մեջ մտնելը եւ կիրառումը**

1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակմանը հաջորդող քսաներորդ օրը:
2. Կիրառելի է 2013 թվականի հունվարի 1-ից:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2011 թվականի մայիսի 4-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժոզե Մանուել ԲԱՂՈՋՈՒ

ՀԱՎԵԼՎԱԾ 1**II-VII հավելվածների նպատակներով կիրառվող սահմանումները**

II-VII հավելվածների նպատակով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

- 1) «*դարձափոխային (ռեվերս) օդորակիչ*» նշանակում է օդորակիչ, որն ունի թե՛ հովացման եւ թե՛ ջեռուցման հնարավորություն.
- 2) «*սրանդարտ անվանական պայմաններ*» նշանակում է ներսի ջերմաստիճանի (*Ջներս*) եւ դրսի ջերմաստիճանի (*Ջj*) համակցություն, որով նկարագրվում են գործարկման պայմանները՝ միաժամանակ սահմանելով ձայնի հզորության մակարդակը, անվանական հզորությունը, օդի հոսքի անվանական արագությունը, էներգաարդյունավետության անվանական գործակիցը (*էԱԳ_{անվանական}*) եւ (կամ) օգտակար գործողության անվանական գործակիցը (*ՕԳԳ_{անվանական}*), ինչպես սահմանված է VII հավելվածի 2-րդ աղյուսակով.
- 3) «*ներսի ջերմաստիճան*» (*Ջներս*) նշանակում է ներսի օդի ջերմաստիճան՝ ըստ չոր ջերմաչափի [$^{\circ}\text{C}$] (հարաբերական խոնավության՝ խոնավ ջերմաչափի համապատասխան ջերմաստիճանի նշմամբ).
- 4) «*դրսի ջերմաստիճան*» (*Ջj*) նշանակում է դրսի օդի ջերմաստիճան՝ ըստ չոր ջերմաչափի [$^{\circ}\text{C}$] (հարաբերական խոնավության՝ խոնավ ջերմաչափի համապատասխան ջերմաստիճանի նշմամբ).
- 5) «*էներգաարդյունավետության անվանական գործակից*» (*էԱԳ_{անվանական}*) նշանակում է հովացման համար սահմանված հզորությունը [կՎտ]՝ բաժանած սարքի՝ հովացման համար մուտքային անվանական հզորությանը [կՎտ]՝ *սրանդարտ անվանական պայմաններում* հովացում ապահովելիս.
- 6) «*օգտակար գործողության անվանական գործակից*» (*ՕԳԳ_{անվանական}*) նշանակում է ջեռուցման համար սահմանված հզորություն [կՎտ]՝ բաժանած

սարքի՝ ջեռուցման համար մուտքային անվանական հզորությանը [կՎտ] սրանդարտ անվանական պայմաններում ջեռուցում ապահովելիս.

- 7) «գլոբալ տաքացման ներուժ»(ԳՏՆ)¹ նշանակում է գոլորշու խտացման ցիկլում կիրառվող 1 կգ սառնազդակի՝ գլոբալ տաքացմանը նպաստելու գնահատված չափը՝ արտահայտված CO₂-ի կգ համարժեքով՝ 100-ամյա ժամանակահատվածի համար.

ԳՏՆ-ի դիտարկվող արժեքները Եվրոպական պառլամենտի և Խորհրդի՝ թիվ 842/2006 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածով սահմանված արժեքներն են.

Ֆտորացված սառնազդակների համար ԳՏՆ-ի արժեքները պետք է լինեն Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի (ԿՓՄԽ) կողմից ընդունված՝ Երրորդ գնահատման զեկույցի մեջ հրապարակված արժեքները² (2001 ԿՓՄԽ ԳՏՆ-ի արժեքներ՝ 100-ամյա ժամանակահատվածի համար).

ոչ ֆտորացված գազերի համար ԳՏՆ-ի արժեքները ԿՓՄԽ առաջին գնահատման³ մեջ 100-ամյա ժամանակահատվածի համար հրապարակված արժեքներն են.

սառնազդակների խառնուրդների համար ընդհանուր ԳՏՆ-ի արժեքները պետք է հիմնված լինեն թիվ 842/2006 կանոնակարգի (ԵԽ) I հավելվածում ներկայացված բանաձևի վրա.

վերոհիշյալ հղումներում չընդգրկված սառնազդակների համար որպես հղում պետք է օգտագործվի ՄԱԿԾՄԾ-ի (ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր) ԿՓՄԽ-ի 2010 թվականի զեկույցը՝ սառնարանային, օդորակման և ջեռուցման պոմպերի վերաբերյալ՝ թվագրված 2011 թվականի փետրվարով, կամ դրա ավելի նոր տարբերակը.

¹ ՊՏ L 161, 14.6.2006 թ., էջ 1:

² ԿՓՄԽ-ի՝ Կլիմայի փոփոխության վերաբերյալ 2001 թվականի երրորդ գնահատում: Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի զեկույց՝ http://www.ipcc.ch/publications_and_data/publications_and_data_reports.shtml

³ Կլիմայի փոփոխություն, ԿՓՄՀ գիտական գնահատում, Զ.Թ. Հոութոն, Գ. Զ. Զենքինս, Զ. Զ. Էֆրոնս (խմբ.), «Քեմբրիջ յունիվերսիթի պրես», Քեմբրիջ (ՄԹ) 1990:

- 8) «անջատած ռեժիմ» նշանակում է վիճակ, որի ժամանակ օդորակիչը կամ կենցաղային օդափոխիչը միացված է էլեկտրասնուցման աղբյուրին եւ որեւէ ֆունկցիա չի կատարում: Որպես «անջատած ռեժիմ» պետք է դիտարկվեն այն պայմանները, որտեղ առկա է միայն «անջատած ռեժիմի» վիճակի ցուցանշում, ինչպես նաեւ այն պայմանները, որոնց դեպքում առկա են Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի¹ 2004/108/ԵՀ հրահանգին համապատասխան էլեկտրամագնիսական համատեղելիություն ապահովելուն ուղղված ֆունկցիոնալ հնարավորություններ:
- 9) «սպասման ռեժիմ» նշանակում է վիճակ, երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման աղբյուրին, նախատեսված ձեռով աշխատելու համար կախված է էլեկտրասնուցման աղբյուրից ստացվող էներգիայից եւ կատարում է միայն հետեւյալ ֆունկցիաները, որոնք կարող են շարունակվել անորոշ ժամանակ՝ վերաակտիվացման ֆունկցիա կամ վերաակտիվացման ֆունկցիա եւ միայն միացված վերաակտիվացման ֆունկցիայի մասին ցուցանշում եւ (կամ) տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրում:
- 10) «վերաակտիվացման ֆունկցիա» նշանակում է ֆունկցիա, որը հեշտացնում է այլ ռեժիմների ակտիվացումը, այդ թվում՝ ակտիվ ռեժիմը, հեռակառավարման անջատիչի, այդ թվում՝ հեռակառավարման վահանակի, ներքին սենսորի լրացուցիչ ֆունկցիաներ, այդ թվում՝ հիմնական ֆունկցիան ապահովող ռեժիմով ժամաչափի միջոցով:
- 11) «տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրում» նշանակում է շարունակական ֆունկցիա, որը ցուցասարքի, այդ թվում՝ ժամացույցների վրա տրամադրում է տեղեկություններ կամ ցույց է տալիս սարքավորման կարգավիճակը:
- 12) «ձայնի հզորության մակարդակ» նշանակում է A կորով որոշված ձայնի հզորության մակարդակը $[L_{p(A)}$] ներսում եւ (կամ) դրսում՝ չափված

¹ ՊՏ L 390, 31.12. 2004թ., էջ 24:

ստանդարտ անվանական պայմաններում հովացման կամ ջեռուցման համար, եթե արտադրանքը չունի հովացման ֆունկցիա.

- 13) «*սկզբնական հաշվարկային պայմաններ*» նշանակում է սկզբնական հաշվարկային ջերմաստիճանին, առավելագույն երկարժեք ջերմաստիճանին եւ գործարկման առավելագույն սահմանային ջերմաստիճանին ներկայացվող պահանջների համակցություն, ինչպես սահմանված է VII հավելվածի 3-րդ աղյուսակով.
- 14) «*սկզբնական հաշվարկային ջերմաստիճան*» նշանակում է դրսի ջերմաստիճան [$^{\circ}\text{C}$]՝ հովացման (*Ջ*_{հաշվարկային h.}) կամ ջեռուցման համար (*Ջ*_{հաշվարկային ջ.}), ինչպես նկարագրված է VII հավելվածի 3-րդ աղյուսակում, որի դեպքում մասնակի բեռնվածքի գործակիցը պետք է հավասար լինի 1-ի, եւ որը տատանվում է՝ կախված հովացման կամ ջեռուցման նախատեսված սեզոնից.
- 15) «մասնակի բեռնվածքի գործակից» (*pl(Ջj)*) նշանակում է դրսի ջերմաստիճան՝ հանած 16°C , բաժանած *սկզբնական հաշվարկային ջերմաստիճանին*, հանած 16°C ՝ հովացման կամ ջեռուցման համար.
- 16) «*սեզոն*» նշանակում է գործարկման պայմանների չորս խմբերից մեկը (առկա է չորս սեզոնների համար՝ մեկ *հովացման սեզոն*, երեք *ջեռուցման սեզոն*՝ միջին, ավելի սառը, ավելի տաք), որը մեկ բինի (միջակայքի) հաշվարկով նկարագրում է դրսի ջերմաստիճանները եւ մեկ սեզոնում այդ ջերմաստիճանների ապահովման այն ժամերի թվի համակցությունը, որի համար սարքը համարվում է նպատակային նշանակությանը համապատասխանող.
- 17) «*բին (միջակայք)*» («j» ինդեքսով) նշանակում է *դրսի ջերմաստիճանի (Ջj)* եւ *բինի ժամերի (ժj) համակցություն*, ինչպես սահմանված է II հավելվածի 1-ին աղյուսակում.

- 18) «բին ժամեր» նշանակում է սեզոնային կտրվածքով այն ժամերը (*ժj*), որոնց ժամանակ *դրսի ջերմաստիճան է ապահովվում* յուրաքանչյուր բինի համար, ինչպես սահմանված է VII հավելվածի 1-ին աղյուսակով.
- 19) «*էներգաարդյունավետության սեզոնային գործակից*» (էԱՍԳ) նշանակում է սարքի ընդհանուր էներգաարդյունավետության գործակից, որն արտացոլում է հովացման ամբողջ սեզոնը՝ հաշվարկված որպես հովացման սկզբնական տարեկան պահանջարկ՝ բաժանած *հովացման համար էլեկտրականության տարեկան սպառմանը*.
- 20) «*հովացման սկզբնական տարեկան պահանջարկ*» (Q_h) նշանակում է հովացման սկզբնական պահանջարկ [կՎտժ/տ], որը ենթակա է օգտագործման որպես էԱՍԳ-ի հաշվարկի հիմք եւ հաշվարկվում է որպես *հովացման համար հաշվարկային բեռնվածքի* ($P_{\text{հաշվարկային } h}$) եւ *հովացման համար ակտիվ ռեժիմում համարժեք ժամերի* արտադրյալ ($\text{ժ} \llcorner$).
- 21) «*հովացման համար ակտիվ ռեժիմում համարժեք ժամեր*» ($\text{ժ} \llcorner$) նշանակում է տարեկան ժամերի ենթադրյալ թիվը [ժ/տ], որոնց ընթացքում սարքը պետք է ապահովի *հովացման համար հաշվարկային բեռնվածք* ($P_{\text{հաշվարկային } h}$) *հովացման սկզբնական տարեկան պահանջարկը* բավարարելու համար, ինչպես սահմանված է VII հավելվածի 4-րդ աղյուսակով.
- 22) «*հովացման համար էլեկտրականության տարեկան սպառում*» (Q_{\llcorner}) նշանակում է հովացման *սկզբնական տարեկան պահանջարկը* բավարարելու համար պահանջվող էլեկտրասպառում [կՎտժ/տ], որը հաշվարկվում է որպես հովացման սկզբնական տարեկան պահանջարկ՝ *բաժանած* ակտիվ ռեժիմում էներգաարդյունավետության սեզոնային գործակցին (էԱՍԳ_{միացված}) եւ սարքի կողմից էլեկտրականության սպառմանը՝ «ջերմապահպանիչից անջատված», «սպասման», «անջատված» ռեժիմներում եւ կարտերային տաքացուցչի ռեժիմում՝ հովացման սեզոնի ընթացքում.

- 23) «ակտիվ ռեժիմում էներգաարդյունավետության սեզոնային գործակից» (ԷԱՍԳ_{օրացված}) նշանակում է սարքի միջին էներգաարդյունավետության գործակից ակտիվ ռեժիմում հովացման ֆունկցիայի համար, որը բաղկացած է մասնակի բեռնվածքին եւ բիներին բնորոշ էներգաարդյունավետության գործակիցներից (ԷԱԳ_{բն}(Ջj)) եւ չափվում է այն բինի ժամերով, որոնց ընթացքում առաջանում է բինի համար սահմանված վիճակ.
- 24) «մասնակի բեռնվածք» նշանակում է հովացման բեռնվածք (Ph(Ջj)) կամ ջեռուցման բեռնվածք (Pջ(Ջj)) [կՎտ] որոշակի դրսի ջերմաստիճանի «Ջj» պայմաններում՝ հաշվարկված որպես հաշվարկային բեռնվածք՝ բազմապատկած մասնակի բեռնվածքի գործակցով.
- 25) «բինին բնորոշ էներգաարդյունավետության գործակից» (ԷԱԳ_{բն}(Ջj)) նշանակում է յուրաքանչյուր «j» բինին բնորոշ էներգաարդյունավետության գործակից՝ սեզոնի ընթացքում դրսի «Ջj» ջերմաստիճանի պայմաններում, որն ստացվում է մասնակի բեռնվածքից, որոշակի «j» բիների համար սահմանված հզորությունից եւ էներգաարդյունավետության սահմանված գործակցից (ԷԱԳ_ս(Ջj)), իսկ այլ բիների համար հաշվարկվում է միջարկման (արտարկման) միջոցով՝ անհրաժեշտության դեպքում արդյունավետության նվազման գործակցի միջոցով ճշգրտմամբ.
- 26) «օգտակար գործողության սեզոնային գործակից» (ՕԳՍԳ) նշանակում է սարքի օգտակար գործողության ընդհանուր գործակից, որն արտացոլում է սահմանված ջեռուցման ամբողջ սեզոնը (ՕԳՍԳ-ի արժեքը վերաբերում է սահմանված ջեռուցման սեզոնին), հաշվարկվում է որպես ջեռուցման սկզբնական տարեկան պահանջարկ՝ բաժանած ջեռուցման համար էլեկտրականության տարեկան սպառման.
- 27) «ջեռուցման սկզբնական տարեկան պահանջարկ» (Q_ճ) նշանակում է ջեռուցման սկզբնական պահանջարկ [կՎտժ/տ], որը վերաբերում է սահմանված ջեռուցման սեզոնին, ենթակա է օգտագործման որպես ՕԳՍԳ-ի

հաշվարկի հիմք եւ հաշվարկվում է որպես *ջեռուցման համար հաշվարկային բեռնվածքի* ($P_{\text{հաշվարկային 2}}$) եւ *ջեռուցման համար ակտիվ սեզոնային ռեժիմում համարժեք ժամերի* արտադրյալ ($\text{ժ}_{\text{ՋՀ}}$).

- 28) «*ջեռուցման համար ակտիվ ռեժիմում համարժեք ժամեր*» ($\text{ժ}_{\text{ՋՀ}}$) նշանակում է տարեկան ժամերի ենթադրյալ թիվը [ժ/տարի], որոնց ընթացքում սարքը պետք է ապահովի *ջեռուցման համար հաշվարկային բեռնվածքը* ($P_{\text{հաշվարկային 2}}$) տարեկան *ջեռուցման սկզբնական պահանջարկը* բավարարելու նպատակով, ինչպես սահմանված է VII հավելվածի 4-րդ աղյուսակով.
- 29) «*ջեռուցման համար էլեկտրականության տարեկան սպառում*» ($Q_{\text{ՋԷ}}$) նշանակում է էլեկտրականության սպառում [կՎտժ/տ], որն անհրաժեշտ է *ջեռուցման*՝ նշված *սկզբնական տարեկան պահանջարկը* բավարարելու համար եւ վերաբերում է սահմանված *ջեռուցման սեզոնին* եւ հաշվարկվում որպես *ջեռուցման սկզբնական տարեկան պահանջարկը* բաժանած *ակտիվ ռեժիմում օգտակար գործողության սեզոնային գործակցով* ($O\text{Գ}U\text{Գ}_{\text{միացված}}$), եւ սարքի կողմից էլեկտրականության սպառմամբ՝ «*ջերմապահպանիչից անջատված*», «*սպասման*», «*անջատված*» ռեժիմներում եւ *կարտերային տաքացուցչի ռեժիմում* *ջեռուցման սեզոնի* ընթացքում.
- 30) «*ակտիվ ռեժիմում օգտակար գործողության սեզոնային գործակից*» ($O\text{Գ}U\text{Գ}_{\text{միացված}}$) նշանակում է սահմանված *ջեռուցման սեզոնի* ընթացքում ակտիվ ռեժիմում սարքի օգտակար գործողության միջին գործակից, որը բաղկացած է *մասնակի բեռնվածքից*, էլեկտրական պահուստային *ջերմային հզորությունից* (անհրաժեշտության դեպքում) եւ *բինին բնորոշ օգտակար գործողության գործակիցներից* ($O\text{Գ}Գ_{\text{բին}}$) ու չափվում է այն բին ժամերով, որոնց ընթացքում առաջանում է որոշակի բինի համար սահմանված վիճակ.
- 31) «*էլեկտրական տաքացուցչի պահուստային հզորություն*» (էլ.պահ.(Ջj)) նշանակում է 1-ին հավասար $O\text{Գ}Գ$ ունեցող՝ իրական կամ ենթադրյալ էլեկտրական տաքացուցչի պահուստային *ջեռուցման հզորություն* [կՎտ], որը

- լրացնում է *ջեռուցման սահմանված հզորությունը (P_{ջ(Ջj)})՝ ջեռուցման համար մասնակի բեռնվածք (P_{ջ(Ջj)}) ապահովելու համար այն դեպքում, երբ P_{ջ(Ջj)}-ը փոքր է P_{ջ(Ջj)}-ից դրսի ջերմաստիճանի (Ջj) համար.*
- 32) «*բինին բնորոշ օգտակար գործողության գործակից*» (O_{ԳԳբին(Ջj)}) նշանակում է յուրաքանչյուր «j» բինին բնորոշ օգտակար գործողության գործակից սեզոնի ընթացքում «Ջj» դրսի ջերմաստիճանով, որը ստացվում է նշված «j» բիների համար մասնակի բեռնվածքից, սահմանված հզորությունից եւ օգտակար գործողության սահմանված գործակից (O_{ԳԳս(Ջj)}), իսկ այլ բիների համար հաշվարկվում է միջարկման (արտարկման) միջոցով՝ անհրաժեշտության դեպքում արդյունավետության նվազման գործակիցի միջոցով ճշգրտմամբ.
- 33) «*սահմանված հզորություն*» [կՎտ] նշանակում է սարքի՝ գոլորշու խտացման ցիկլի հզորությունը հովացման (P_{ս(Ջj)}) կամ ջեռուցման (P_{ջ(Ջj)}) համար, համապատասխան դրսի «Ջj» ջերմաստիճանի եւ ներսի (Ջ_{ներս}) ջերմաստիճանի դեպքում, ինչպես հայտարարվել է արտադրողի կողմից.
- 34) «*ֆունկցիա*» նշանակում է նշում սարքի՝ ներսի օդի հովացման, ներսի օդի տաքացման կամ երկուսի կարողության մասին.
- 35) «*հաշվարկային բեռնվածք*» նշանակում է սահմանված հովացման բեռնվածք (P_{հաշվարկային հ.}) եւ (կամ) սահմանված ջեռուցման բեռնվածք (P_{հաշվարկային ջ.}) [կՎտ] սկզբնական հաշվարկային ջերմաստիճանի պայմաններում, որտեղ՝
- ա) հովացման ռեժիմի համար՝ P_{հաշվարկային հ.}-ն հավասար է հովացման սահմանված հզորությանը՝ Ջ_{հաշվարկային հ.}-ին հավասար «Ջj» պայմաններում.
- բ) ջեռուցման ռեժիմի համար՝ P_{հաշվարկային ջ.}-ն հավասար է մասնակի բեռնվածքին՝ Ջ_{հաշվարկային ջ.}-ին հավասար «Ջj» պայմաններում.
- 36) «*էներգաարդյունավետության սահմանված գործակից*» (էԱԳս (Ջj)) նշանակում է էներգաարդյունավետության գործակից՝ նշված «j» բիների

- սահմանափակ թվի համար դրսի (Ջj) ջերմաստիճանի պայմաններում, ինչպես հայտարարվել էր արտադրողի կողմից.
- 37) «օգտակար գործողության սահմանված գործակից» (OԳԳս(Ջj)) նշանակում է օգտակար գործողության գործակից՝ նշված «j» *բիների* սահմանափակ թվի համար դրսի (Ջj) ջերմաստիճանի պայմաններում, ինչպես հայտարարվել էր արտադրողի կողմից.
- 38) «*երկարժեք ջերմաստիճան*» (*Ջերկ*) նշանակում է արտադրողի կողմից ջեռուցման համար սահմանված *դրսի ջերմաստիճան (Ջj)* [$^{\circ}\text{C}$], որի դեպքում *սահմանված հզորությունը* հավասար է *մասնակի բեռնվածքին*, եւ որից ցածր *սահմանված հզորությունը* պետք է լրացվի *էլեկտրական պահուստային տարացուցչի հզորությամբ*՝ ջեռուցման համար մասնակի բեռնվածքն ապահովելու համար.
- 39) «*գործարկման սահմանային ջերմաստիճան*» (*Ջգս*) նշանակում է արտադրողի կողմից ջեռուցման համար հայտարարված *դրսի ջերմաստիճան* [$^{\circ}\text{C}$], որից ցածր ջերմաստիճանի դեպքում օդորակիչը չունի ջեռուցման հզորություն: Այս ջերմաստիճանից ցածր ջերմաստիճանի դեպքում սահմանված հզորությունը հավասար է զրոյի.
- 40) «*ակտիվ ռեժիմ*» նշանակում է շենքի հովացման կամ ջեռուցման բեռնվածքով աշխատանքի ժամերին համապատասխանող ռեժիմ, որի ժամանակ ակտիվացված է սարքի՝ հովացման կամ ջեռուցման ֆունկցիան: Այս պայմանը կարող է վերաբերել սարքի գործարկումներին/դադարեցներին՝ ներսի պահանջվող ջերմաստիճան ապահովելու կամ այն պահպանելու նպատակով.
- 41) «*ջերմապահպանիչից անջատված ռեժիմ*» նշանակում է ռեժիմ, որը համապատասխանում է առանց հովացման կամ ջեռուցման բեռնվածքի ժամերին, որոնց դեպքում սարքի հովացման կամ ջեռուցման ֆունկցիան միանում է, սակայն սարքը պատրաստ չէ գործարկման, քանի որ առկա չէ

հովացման կամ ջեռուցման բեռնվածք: Հետեւաբար այս պայմանը վերաբերում է դրսի ջերմաստիճաններին, այլ ոչ թե ներսի բեռնվածքներին: Ակտիվ ռեժիմում գործարկումը/դադարը չի համարվում «ջերմապահպանիչից անջատված» ռեժիմ.

- 42) «կարտերային տաքացուցչի գործարկման ռեժիմ» նշանակում է պայման, որի դեպքում սարքն ակտիվացրել է տաքացուցիչը՝ դեպի կոմպրեսոր սառնազդակի անցումից խուսափելու համար՝ կոմպրեսորի գործարկման պահին յուղում սառնազդակի կենտրոնացումը սահմանափակելու նպատակով.
- 43) «ջերմապահպանիչից անջատված ռեժիմում գործարկման ժամեր» (ժ_{2u}) նշանակում է այն ժամերի թիվը տարվա ընթացքում [ժ/տ], որոնց դեպքում համարվում է, որ սարքը գտնվում է «ջերմապահպանիչից անջատված ռեժիմում», որի արժեքը կախված է նշված սեզոնից եւ ֆունկցիայից.
- 44) «սպասման ռեժիմում գործարկման ժամեր» (ժ_{սո}) նշանակում է ժամերի թիվը տարվա ընթացքում [ժ/տ]), որոնց դեպքում համարվում է, որ սարքը գտնվում է սպասման ռեժիմում, որի արժեքը կախված է սահմանված սեզոնից եւ ֆունկցիայից.
- 45) «անջատված ռեժիմում գործարկման ժամեր» (ժ_{անջատված}) նշանակում է ժամերի թիվը տարվա ընթացքում [ժ/տ]), որոնց դեպքում համարվում է, որ սարքը գտնվում է անջատված ռեժիմում, որի արժեքը կախված է նշված սեզոնից եւ ֆունկցիայից.
- 46) «կարտերային տաքացուցչի աշխատանքի ընթացքում գործարկման ժամեր» (ժ_{կարտ.}) նշանակում է ժամերի թիվը տարվա ընթացքում [ժ/տ]), որոնց դեպքում համարվում է, որ սարքը գտնվում է կարտերային տաքացուցչի գործարկման ռեժիմում, որի արժեքը կախված է նշված սեզոնից եւ ֆունկցիայից.

- 47) «երկխոռոչային եւ միախոռոչային օդորակիչների կողմից էլեկտրականության սպառում» (Չմիախոռոչ. համապատասխանաբար՝ Չերկխոռոչ.) նշանակում է էլեկտրականության սպառումը միախոռոչային կամ երկխոռոչային օդորակիչների կողմից հովացման եւ (կամ) ջեռուցման ռեժիմի համար (որն էլ կիրառելի լինի) [միախոռոչային օդորակիչները՝ կՎտժ/ժ-ով, երկխոռոչային օդորակիչները՝ կՎտժ/տ-ով].
- 48) «հզորության գործակից» նշանակում է բոլոր շահագործվող՝ ներսում տեղադրված սարքերի ընդհանուր սահմանված հովացման կամ ջեռուցման հզորության եւ դրսում տեղադրված սարքի՝ հովացման կամ ջեռուցման հզորության գործակիցը՝ ստանդարտ անվանական պայմաններում:
-

ՀԱՎԵԼՎԱԾ II

Էներգաարդյունավետության դասերը

1. Օդորակիչների էներգաարդյունավետությունը որոշվում է VII հավելվածով սահմանված չափումների եւ հաշվարկների հիման վրա:

Թե՛ ԷԱՍԳ-ում եւ թե՛ ՕԳՍԳ-ում պետք է հաշվի առնվեն սկզբնական հաշվարկային պայմանները եւ գործարկման ժամերի թիվն ըստ գործարկման համապատասխան ռեժիմի, մինչդեռ ՕԳՍԳ-ը պետք է վերաբերի ջեռուցման սեզոնի «միջինին», ինչպես սահմանված է VII հավելվածով: Էներգաարդյունավետության անվանական գործակիցը (ԷԱԳ_{անվանական}) եւ օգտակար գործողության անվանական գործակիցը (ՕԳԳ_{անվանական}) պետք է վերաբերեն ստանդարտ անվանական պայմաններին, ինչպես սահմանված է VII հավելվածով:

Աղյուսակ 1

Էներգաարդյունավետության դասերը օդորակիչների համար՝ բացառությամբ երկխողովակ եւ միախողովակ օդորակիչների

Էներգաարդյունավետության դասը	ԷԱՍԳ	ՕԳՍԳ
A+++	ԷԱՍԳ \geq 8,50	ՕԳՍԳ \geq 5,10
A++	6,10 \leq ԷԱՍԳ $<$ 8,50	4,60 \leq ՕԳՍԳ $<$ 5,10
A+	5,60 \leq ԷԱՍԳ $<$ 6,10	4,00 \leq ՕԳՍԳ $<$ 4,60
A	5,10 \leq ԷԱՍԳ $<$ 5,60	3,40 \leq ՕԳՍԳ $<$ 4,00
B	4,60 \leq ԷԱՍԳ $<$ 5,10	3,10 \leq ՕԳՍԳ $<$ 3,40
C	4,10 \leq ԷԱՍԳ $<$ 4,60	2,80 \leq ՕԳՍԳ $<$ 3,10
D	3,60 \leq ԷԱՍԳ $<$ 4,10	2,50 \leq ՕԳՍԳ $<$ 2,80
E	3,10 \leq ԷԱՍԳ $<$ 3,60	2,20 \leq ՕԳՍԳ $<$ 2,50
F	2,60 \leq ԷԱՍԳ $<$ 3,10	1,90 \leq ՕԳՍԳ $<$ 2,20
G	ԷԱՍԳ $<$ 2,60	ՕԳՍԳ $<$ 1,90

Աղյուսակ 2

**Էներգաարդյունավետության դասերը՝ երկխողովակ եւ միախողովակ
օդրակիչների համար**


Էներգաարդյունավետության դասը	Երկխողովակ օդրակիչներ		Միախողովակ օդրակիչներ	
	ԷԱԳ _{անվանական}	ՕԳԳ _{անվանական}	ԷԱԳ _{անվանական}	ՕԳԳ _{անվանական}
A+++	$\geq 4,10$	$\geq 4,60$	$\geq 4,10$	$\geq 3,60$
A++	$3,60 \leq \text{ԷԱԳ} < 4,10$	$4,10 \leq \text{ՕԳԳ} < 4,60$	$3,60 \leq \text{ԷԱԳ} < 4,10$	$3,10 \leq \text{ՕԳԳ} < 3,60$
A+	$3,10 \leq \text{ԷԱԳ} < 3,60$	$3,60 \leq \text{ՕԳԳ} < 4,10$	$3,10 \leq \text{ԷԱԳ} < 3,60$	$2,60 \leq \text{ՕԳԳ} < 3,10$
A	$2,60 \leq \text{ԷԱԳ} < 3,10$	$3,10 \leq \text{ՕԳԳ} < 3,60$	$2,60 \leq \text{ԷԱԳ} < 3,10$	$2,30 \leq \text{ՕԳԳ} < 2,60$
B	$2,40 \leq \text{ԷԱԳ} < 2,60$	$2,60 \leq \text{ՕԳԳ} < 3,10$	$2,40 \leq \text{ԷԱԳ} < 2,60$	$2,00 \leq \text{ՕԳԳ} < 2,30$
C	$2,10 \leq \text{ԷԱԳ} < 2,40$	$2,40 \leq \text{ՕԳԳ} < 2,60$	$2,10 \leq \text{ԷԱԳ} < 2,40$	$1,80 \leq \text{ՕԳԳ} < 2,00$
D	$1,80 \leq \text{ԷԱԳ} < 2,10$	$2,00 \leq \text{ՕԳԳ} < 2,40$	$1,80 \leq \text{ԷԱԳ} < 2,10$	$1,60 \leq \text{ՕԳԳ} < 1,80$
E	$1,60 \leq \text{ԷԱԳ} < 1,80$	$1,80 \leq \text{ՕԳԳ} < 2,00$	$1,60 \leq \text{ԷԱԳ} < 1,80$	$1,40 \leq \text{ՕԳԳ} < 1,60$
F	$1,40 \leq \text{ԷԱԳ} < 1,60$	$1,60 \leq \text{ՕԳԳ} < 1,80$	$1,40 \leq \text{ԷԱԳ} < 1,60$	$1,20 \leq \text{ՕԳԳ} < 1,40$
G	$< 1,40$	$< 1,60$	$< 1,40$	$< 1,20$

ՀԱՎԵԼՎԱԾ III

Պիտակը

1. ՊԻՏԱԿ ՕԴՈՐԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԲԱՅԱՌՈՒԹՅԱՄԲ ՄԻԱԽՈՂՈՎԱԿ ԵՎ ԵՐԿԽՈՂՈՎԱԿ ՕԴՈՐԱԿԻՉՆԵՐԻ

1.1. Ռեվերս օդորակիչներ, որոնք դասվում են A-ից G էներգաարդյունավետության դասերին



I
II
III

IV

V
VI
VII
VIII
IX

X


XI

- ա) Հետեւյալ տեղեկությունները ներառվում են պիտակի վրա՝
- I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
 - II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը.
 - III. «ԷԱՍԳ» եւ «ՕԳԳ» տեքստը հովացման եւ ջեռուցման համար՝ կապույտ օդափոխիչի եւ օդի ալիքի նշագրով՝ ԷԱՍԳ-ի համար, եւ կարմիր օդափոխիչի ու օդի ալիքի նշագրով՝ ՕԳՍԳ-ի համար.
 - IV. Էներգաարդյունավետությունը. սարքավորման Էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է զետեղված լինի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան Էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը: Էներգաարդյունավետությունը պետք է նշվի հովացման եւ ջեռուցման համար: Ջեռուցման համար պարտադիր է նշել միջին ջեռուցման սեզոնի Էներգաարդյունավետությունը: Ավելի տաք կամ սառը սեզոնների համար արդյունավետության նշումը կամընտրական է.
 - V. հովացման ռեժիմի համար՝ *հաշվարկային բեռնվածքը* կՎտ-ով, կլորացված մինչեւ մեկ տասնորդական նիշը.
 - VI. ջեռուցման ռեժիմի համար՝ *հաշվարկային բեռնվածքը* կՎտ-ով, թվով մինչեւ 3 ջեռուցման սեզոնների համար՝ կլորացված մինչեւ մեկ տասնորդական նիշը: Ջեռուցման սեզոններին առնչվող այն արժեքները, որոնց համար *հաշվարկային բեռնվածք* չի տրամադրվում, նշվում են որպես «X».
 - VII. հովացման ռեժիմի համար՝ Էներգաարդյունավետության սեզոնային գործակիցը (ԷԱՍԳ արժեքը)՝ կլորացված մինչեւ մեկ տասնորդական նիշը.

- VIII. ջեռուցման սեզոնի համար՝ օգտակար գործողության սեզոնային գործակիցը (ՕԳՍԳ արժեքը)¹ թվով մինչեւ 3 ջեռուցման սեզոնների համար՝ կլորացված մինչեւ մեկ տասնորդական նիշը: Ջեռուցման սեզոններին առնչվող այն արժեքները, որոնց համար ՕԳՍԳ-ն չի տրամադրվում, նշվում են որպես «X».
- IX. տարեկան էներգասպառում՝ կՎտժ/տ-ով՝ հովացման եւ ջեռուցման համար՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը: Այն կլիմայական պայմանների նկարագրությանն առնչվող արժեքները, որոնց համար տարեկան էներգասպառում չի տրամադրվում, պետք է նշվեն որպես «X».
- X. ձայնի հզորության մակարդակները ներսում եւ դրսում տեղադրվող սարքերի համար՝ արտահայտված դԲ(A)-ով՝ 1 պՎտ-ի համար՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
- XI. Եվրոպայի քարտեզը՝ ջեռուցման երեք կողմնորոշիչ սեզոնների եւ համապատասխան գունավոր քառակուսիների ցուցադրմամբ:
- Բոլոր պահանջվող արժեքները պետք է որոշվեն VII հավելվածի համաձայն:
- բ) Պիտակի ձեւը պետք է համապատասխանի 1.5 կետին: Որպես բացառություն՝ այն դեպքում, երբ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 66/2010 կանոնակարգի (ԵՀ) համաձայն մոդելին շնորհվել է «ԵՄ էկոպիտակ»¹, կարող է ավելացվել ԵՄ էկոպիտակի պատճենը:

¹ ՊՏ L 27, 30.1.2010թ., էջ 1:

1.2. Ռեվերս օդորակիչներ, որոնք դասվում են A+-ից F էներգաարդյունավետության դասերին



I
II
III

IV

V
VI
VII
VIII
IX


X

XI

ա) Պիտակում պետք է ներառված լինեն 1.1 կետում թվարկված տեղեկությունները:

բ) Պիտակի ձեռի վերաբերյալ հայեցակետերը պետք է համապատասխանեն 1.5 կետին:


1.3. Ռեվերս օդորակիչներ, որոնք դասվում են A++-ից E էներգաարդյունավետության դասերին



I
II
III
IV
V
VI
VII
VIII
IX
X
XI

- ա) Պիտակում պետք է ներառված լինեն 1.1 կետում թվարկված տեղեկությունները:
- բ) Պիտակի ձեռի վերաբերյալ հայեցակետերը պետք է համապատասխանեն 1.5 կետին:

1.4. Ռեվերս օդորակիչներ, որոնք դասվում են A+++-ից D էներգաարդյունավետության դասերին



I
II
III

IV


V
VI
VII
VIII
IX

X

XI

- ա) Պիտակում պետք է ներառված լինեն 1.1 կետում թվարկված տեղեկությունները:
- բ) Պիտակի ձեռի վերաբերյալ հայեցակետերը պետք է համապատասխանեն 1.5 կետին:

1.5. Պիտակի ձևը



որտեղ՝

- i) պիտակը պետք է ունենա առնվազն 120 մմ լայնություն եւ 210 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրվում է ավելի մեծ ձեւաչափով, դրա բովանդակությունը, այնուամենայնիվ, պետք է համաչափ մնա վերը նշված տեխնիկական մասնագրերին.
- ii) ֆոնը պետք է լինի սպիտակ.
- iii) գույները պետք է ունենան ԿԿԴՍ ծածկագիրը՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին, սեւ՝ հետեւյալ օրինակի համաձայն՝ 00-70-X-00՝ 0 % կապտականաչ, 70 % կարմրամանուշակագույն, 100 % դեղին, 0 % սեւ.
- iv) պիտակը պետք է բավարարի հետեւյալ բոլոր պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին).
 1. **ԵՄ պիտակի եզրագիծը՝** նրբագիծ՝ 5 կետ, գույնը՝ 100% կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
 2. **ԵՄ պատկերանիշ՝** Գույները՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:
 3. **Էներգապիտակ՝** Գույնը՝ X-00-00-00:
Գրաֆիկական պատկերը՝ ինչպես ցուցադրված է՝ ԵՄ պատկերանիշ + էներգաարդյունավետության պիտակը՝ լայնություն՝ 102 մմ, բարձրություն՝ 20 մմ:
 4. **Պատկերանիշի տակ գտնվող եզրագիծը՝** 1 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, երկարությունը՝ 103,6 մմ:
 5. **ԷԱՍԳ եւ ՕԳԳ նշագիրը՝**
Եզրագիծ՝ 2 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
Տեքստը՝ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 10 կետ, մեծատառեր, 100 % սեւ:

6. A-ից G սանդղակ՝

- **Սլաք՝** բարձրություն՝ 7 մմ, տարածություն՝ 1 մմ, գույները՝
Ամենաբարձր դասը՝ X-00-X-00
Երկրորդ դասը՝ 70-00-X-00,
Երրորդ դասը՝ 30-00-X-00,
Չորրորդ դասը՝ 00-00-X-00,
Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,
Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,
Վերջին դասը (դասերը)՝ 00-X-X-00:
- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 16 կետ,
մեծատառեր, սպիտակ:

7. Էներգաարդյունավետության դասը (դասերը)՝

- **Սլաք՝** լայնություն՝ 11 մմ, բարձրություն՝ 10 մմ, 100 % սեւ.
- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 18 կետ,
մեծատառեր, սպիտակ:

8. Էներգիա

- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 9 կետ,
մեծատառեր, 100 % սեւ:

9. Հովացման եւ ջեռուցման անվանական հզորություն կՎտ-ով՝

- **«կՎտ» տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 10
կետ, 100 % սեւ:
- **«XY,Z» արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 11 կետ,
100 % սեւ:

10. ՕԳՍԳ եւ ԷԱՍԳ արժեքները՝ կլորացված մինչեւ մեկ տասնորդական նիշը՝

- **«ԷԱՍԳ»/«ՕԳՍԳ» տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 10 կետ, մեծատառեր, 100 % սեւ:
- **«X,Y» արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 11 կետ, 100 % սեւ:

11. Տարեկան էներգասպառումը՝ կՎտժ/տ-ով.

- **«կՎտժ/տ» տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 10 կետ, 100 % սեւ:
- **«XY» արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 11 կետ, 100 % սեւ:

12. Աղմուկի առաջացում.

- **Եզրագիծը՝** 2 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- **Արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 15 կետ, 100 % սեւ.
«Կալիբրի» տառատեսակ, սովորական 12 կետ, 100 % սեւ:

13. Եվրոպայի քարտեզը եւ գունավոր քառակուսիները.

— **Գույները.**

Նարնջագույն՝ 00-46-46-00:

Կանաչ՝ 59-00-47-00:

Կապույտ՝ 54-08-00-00:

14. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.

15. Մատակարարի մոդելի նույնականացուցիչը.


Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 102 * 13 մմ տարածության մեջ:

16. Հաշվետու ժամանակաշրջան.

— **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ, 10 կետ:

2. ՕՂՈՐԱԿԻՉՆԵՐԻ ՊԻՏԱԿ ' ԲԱՅԱՌՈՒԹՅԱՄԲ ՄԻԱԽՈՂՈՎԱԿ ԵՎ ԵՐԿԽՈՂՈՎԱԿ ՕՂՈՐԱԿԻՉՆԵՐԻ

2.1. Միայն հովացման ֆունկցիայով օդորակիչներ, որոնք դասվում են A-ից G էներգաարդյունավետության դասերին



I
II
III

IV


V
VI
VII

VIII

- ա) Հետեյալ տեղեկությունները ներառվում են պիտակի վրա՝
- I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
 - II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը.
 - III. «ԷԱՍԳ» տեքստը՝ կապույտ օդափոխիչի եւ օդի ալիքի նշագրով.
 - IV. էներգաարդյունավետության դասը. սարքավորման էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է զետեղված լինի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը.
 - V. հովացման հաշվարկային բեռնվածքը կՎտ-ով՝ կլորացված մինչեւ մեկ տասնորդական նիշը.
 - VI. էներգաարդյունավետության սեզոնային գործակիցը (ԷԱՍԳ արժեքը)՝ կլորացված մինչեւ մեկ տասնորդական նիշը.
 - VII. տարեկան էներգասպառումը՝ կՎտժ/տարի-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
 - VIII. ձայնի հզորության մակարդակները ներսում եւ դրսում տեղադրվող սարքերի համար՝ արտահայտված դԲ(A)-ով՝ 1 պՎտ-ի համար՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը:

Բոլոր պահանջվող արժեքները պետք է որոշվեն VII հավելվածի համաձայն:
- բ) Պիտակի ձեւը պետք է համապատասխանի 2.5 կետին: Որպես բացառություն՝ այն դեպքում, երբ թիվ 66/2010 (ԵՀ) կանոնակարգի համաձայն մոդելին շնորհվել է «ԵՄ էկոպիտակ», կարող է ավելացվել ԵՄ էկոպիտակի պատճենը:


2.2. Միայն հովացման ֆունկցիայով օդորակիչներ, որոնք դասվում են A+-ից F էներգաարդյունավետության դասերին



ա) Պիտակում պետք է ներառված լինեն 2.1 կետում թվարկված տեղեկությունները:

բ) Պիտակի ձեռի վերաբերյալ հայեցակետերը պետք է համապատասխանեն 2.5 կետին:


2.3. Միայն հովացման ֆունկցիայով օդորակիչներ, որոնք դասվում են A++-ից E էներգաարդյունավետության դասերին



ա) Պիտակում պետք է ներառված լինեն 2.1 կետում թվարկված տեղեկությունները:


բ) Պիտակի ձեռի վերաբերյալ հայեցակետերը պետք է համապատասխանեն 2.5 կետին:

2.4. Միայն հովացման ֆունկցիայով օդորակիչներ, որոնք դասվում են A+++-ից D էներգաարդյունավետության դասերին



- ա) Պիտակում պետք է ներառված լինեն 2.1 կետում թվարկված տեղեկությունները:
- բ) Պիտակի ձեռի վերաբերյալ հայեցակետերը պետք է համապատասխանեն 2.5 կետին:

2.5. Պիտակի ձևը



որտեղ՝

- i) պիտակը պետք է ունենա առնվազն 100 մմ լայնություն եւ 200 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրվում է ավելի մեծ ձեւաչափով, դրա բովանդակությունը, այնուամենայնիվ, պետք է համաչափ մնա վերը նշված տեխնիկական մասնագրերին.
- ii) ֆոնը պետք է լինի սպիտակ.
- iii) գույները պետք է ունենան ԿԿԴՍ ծածկագիրը՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին, սեւ՝ հետեւյալ օրինակի համաձայն՝ 00-70-X-00՝ 0 % կապտականաչ, 70 % կարմրամանուշակագույն, 100 % դեղին, 0 % սեւ.
- iv) Պիտակը պետք է բավարարի հետեւյալ բոլոր պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին).

1. ԵՄ պիտակի եզրագիծը՝ նրբագիծ՝ 5 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:

2. ԵՄ պատկերանիշ՝ Գույները՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:

3. Էներգապիտակ՝

Գույնը՝ X-00-00-00:

Գրաֆիկական պատկերը՝ ինչպես ցուցադրված է՝ ԵՄ պատկերանիշ + էներգաարդյունավետության պիտակ՝ լայնություն՝ 93 մմ,

բարձրություն՝ 18 մմ:

4. Պատկերանիշի տակ գտնվող եզրագիծը՝ 1 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, երկարությունը՝ 93,7 մմ:

5. ԷԱՍԳ նշագիրը՝

Տեքստը՝ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 10 կետ, մեծատառեր, 100 % սեւ:

6. A-ից G սանդղակ՝

- **Սլաք՝** բարձրություն՝ 7 մմ, տարածություն՝ 1,3 մմ, գույները՝
Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,
Երկրորդ դասը՝ 70-00-X-00,
Երրորդ դասը՝ 30-00-X-00,
Չորրորդ դասը՝ 00-00-X-00,
Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,
Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,
Վերջին դասը (դասերը)՝ 00-X-X-00:
- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 18 կետ,
մեծատառեր, սպիտակ:

7. Էներգաարդյունավետության դասը՝

- **Սլաք՝** Լայնություն՝ 23 մմ, բարձրություն՝ 15 մմ, 100 % սեւ.
- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 29 կետ,
մեծատառեր, սպիտակ:

8. Էներգիա՝

- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 8 կետ,
մեծատառեր, 100 % սեւ:

9 Անվանական հզորություն կՎտ-ով՝

«կՎտ» տեքստը՝ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 14 կետ,
100 % սեւ:

«XY,Z» արժեք՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ 22 կետ, 100 % սեւ:

10. ԷԱՍԳ արժեքը՝ կլորացված մինչև մեկ տասնորդական նիշը՝

- **Եզրագիծը՝** 3 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- **«ԷԱՍԳ» տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 14 կետ, մեծատառեր, 100 % սև:
- **«X,Y» արժեք.** «Կալիբրի» տառատեսակ, թավ 22 կետ, 100 % սև:

11. Տարեկան էներգասպառումը՝ կՎտժ/տ-ով.

- **Տեքստը՝** «կՎտժ/տ». «Կալիբրի» տառատեսակ, սովորական 14 կետ, 100 % սև:
- **«XY» արժեքը.** «Կալիբրի» տառատեսակ, թավ 22 կետ, 100 % սև:

12. Աղմուկի առաջացում.

- **Եզրագիծը՝** 2 կետ, գույնը՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- **Արժեքը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 22 կետ, 100 % սև:
- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 14 կետ, 100 % սև:

13. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.**14. Մատակարարի մոդելի նույնականացուցիչը.**


Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 90 * 15 մմ տարածության մեջ:

15. Հաշվետու ժամանակաշրջան.

- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ, 10 կետ:

3. ՕՂՈՐԱԿԻՉՆԵՐԻ ՊԻՏԱԿ՝ ԲԱՅԱՌՈՒԹՅԱՄԲ ՄԻԱԽՈՂՈՎԱԿ ԵՎ ԵՐԿԽՈՂՈՎԱԿ ՕՂՈՐԱԿԻՉՆԵՐԻ

3.1. Միայն ջեռուցման ֆունկցիայով օդորակիչներ, որոնք դասվում են A-ից G էներգաարդյունավետության դասերին



I
II
III

IV


V
VI
VII

VIII
IX

- ա) Հետեյալ տեղեկությունները ներառվում են պիտակի վրա՝
- I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
 - II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը.
 - III. «ԷԱՍԳ» տեքստը՝ կարմիր օդափոփիչի եւ օդի ալիքի նշագրով.
 - IV. Էներգաարդյունավետության դասը. սարքավորման Էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է զետեղված լինի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան Էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը: Պարտադիր է նշել միջին ջեռուցման սեզոնի Էներգաարդյունավետությունը: Ավելի տաք կամ ավելի սառը կլիմաների համար արդյունավետության նշումը կամընտրական է.
 - V. ջեռուցման համար հաշվարկային բեռնվածքը կՎտ-ով՝ թվով մինչեւ 3 ջեռուցման սեզոնների համար՝ կլորացված մինչեւ մեկ տասնորդական նիշը: Ջեռուցման սեզոններին առնչվող այն արժեքները, որոնց համար հաշվարկային բեռնվածք չի տրամադրվում, նշվում են որպես «X».
 - VI. օգտակար գործողության սեզոնային գործակիցը (ՕԳՍԳ արժեքը)՝ թվով մինչեւ 3 ջեռուցման սեզոնների համար՝ կլորացված մինչեւ մեկ տասնորդական նիշը: Ջեռուցման սեզոններին առնչվող այն արժեքները, որոնց համար ՕԳՍԳ չի տրամադրվում, նշվում են որպես «X».
 - VII. տարեկան Էներգասպառումը՝ կՎտժ/տ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը: Այն ջեռուցման սեզոններին առնչվող արժեքները, որոնց համար տարեկան Էներգասպառում չի տրամադրվել, պետք է նշվեն որպես «X».

- VIII. ձայնի հզորության մակարդակները ներսում եւ դրսում տեղադրվող սարքերի համար՝ արտահայտված դԲ(A)-ով՝ 1 պվտ-ի համար՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
- IX. Եվրոպայի քարտեզը՝ երեք կողմնորոշիչ ջեռուցման սեզոնների եւ համապատասխան գունավոր քառակուսիների ցուցադրմամբ:
